

ստուգիւ չպիտի թոյլատրէր խումբ մը հրեայ բո-  
րոտներուն: Կ'երեւի որ Գալիլիոյ հողին կամ ճիշդ  
սահմանազուխին վրայ տեղի ունեցաւ դէպքը: Կա-  
րելի է մտածել դաշտի փոքր գիւղերու մասին, ինչ-  
պէս Թարպէնէթ, Աֆուլէ, Էլ-Ֆուլէ, նոյնիսկ Սուլէմ:  
Անկարելի է այդ տեղ սամարացիի մը հետ մուրացիկ  
հրեայ բորոտներուն գտնուիլը: «Մեծ դաշտին» մէջ  
անձանօթ գիւղին գիրքն է որ Ղուկասու մէջ յիշ-  
ուած տեղագրական սահմանումին բանալին պիտի  
կրնայ տալ: Այս դաշտը կը կազմէ ընդարձակ միջոց  
մը Գալիլիայի և Սամարիոյ միջև. ճշգրիտ խօսելով  
անոր սկզբնաւորութիւնը կրնայ ըլլալ այն լեռնոտ եր-  
կիրը որ երկու կողմերը կը շրջանակէ: Եթէ Յիսուս  
Երուսաղէմ գացած ժամանակ այն տեղէն անցաւ,  
այս անցքը կը սահմանուի իբր ճանապարհ Սամարիոյ  
և Գալիլիայի միջև: Ղուկասի Ժէ. 11 խօսքին տեղա-  
դրական տուիքը կը մեկնուի այնպէս՝ որպէս թէ Յի-  
սուսի ճանապարհորդութեան նպատակը Երիբովը ե-  
ղած է և անկէ ալ Երուսաղէմ (Dal. էջ 278):

Հայֆա. — Հայֆա երբեմն կը կոչուէր Գալամոն,  
Ս. Գրոց մէջ անունը չգտնուիր. շատ ուշ երեցած է  
պատմութեան մէջ և անկարեոր դեր մը միայն ունե-  
ցած: Հայֆայի կամ Գալամոնի մօտ կը գտնուէր Sy-  
caminos քաղաքը որ իր անունը ստացած կը թուի իր  
երկրին ժանտաթղենիններէն (sycomores): Գալամոն եւ  
Սիգամինոս երկու ախոյեաններ էին որ կը բարգաւա-  
ճէին մին միւսին ի վնաս, մինչև միջին դար, երբ  
վերջինը մշտապէս անյայտ եղաւ: Միոյն պատմու-  
թիւնը շփոթուած է միւսինին հետ:

Եւսերիոս և Յերոնիմոս Սիգամինոսը և Գալամոնը